



«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Թեմա՝** «Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը»

**Դաստիարակ՝** Անժելա Դավթյան

**Մանկապարտեզ՝** « Թիվ 5 ՆՈՒՀ » ՀՈԱԿ

2023թ.

# Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	3
ԳԼՈՒԽ 1: ՍԱՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱԶՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ .....	5
1.1 Ինչ է հայրենիքը և հայրենասիրությունը .....	5
1.2 Ինչո՞ւ լինել հայրենաճանաչ .....	6
ԳԼՈՒԽ 2: ՍԱՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱԶՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ .....	8
2.1 Նյութի ուսումնասիրություն և պարապմունքի պլանավորում .....	8
2.2 Միջավայրի և նյութերի ընտրություն .....	8
2.3 Համակարգի ընտրություն .....	8
ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ .....	10
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ .....	16
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	17

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*<<Գոյություն ունի մի ուժ, որ աշխարհի զանազան ծայրերից կարող է միավորել հայերին՝ հոգով, մտքով և արյունով: Դա ազգային սերն է: Ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարիտ սիրել այն: >>*

ՐԱՖՖԻ

Մեր հայրենիքը դարերի անմահ պատմություն է՝ լցված կենաց պատերազմներով, հայրենի հողի հանդեպ սիրով և խաղաղության ձգտմամբ:

Իսկ որտեղից է սկսվում հայրենիքը և հայրենասիրությունը: Այս սկսում է մեզնից և դաստիարակվում մանկուց, դեռևս նախադպրոցական հասակում:

Հայրենասիրությունը իր հերթին սկսվում է հայրենաճանաչողությունից, որը այսօրվա իրականության մեջ կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում, քանզի այն նպաստում է անհատի մեջ սերմանելու սեր դեպի իր տունը՝ հայրենիքը: Անհատն այնքանով է տեր կանգնում իր հայրենիքին, որքանով ճանաչում է այն և եթե չլինի այդ ճանաչությունը, չի լինի կապվածություն, սեր և նվիրում դեպի հայրենիք: Այդ պատճառով էլ նախադպրոցական հասակում պետք է սկսել հայրենաճանաչողություն, պահպանելու համար ազգային արժեքները և դաստիարակելու համար գիտակից ու հայրենասեր անհատ:

Հայրենաճանաչողության առաջին քայլերը պետք է կատարել, ճանաչելու համար սեփական հայրենիքը, չէ որ ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարիտ սիրել նրան, իսկ ինչպես ասել է Նապոլեոն I-ը, «Սերը դեպի հայրենիք քաղաքակիրթ մարդու առաջին արժանիքն է:», իսկ մեր նպատակն է կրթել և դաստիարակել քաղաքակիրթ սերունդ:

**Հետազոտության նպատակը:** Հետազոտության նպատակն է սաների մեջ սերմանել հայրենասիրություն, դարձնել նրանց հայրենաճանաչ՝ նպաստելով ազգային արժեքների պահպանմանը և արժանավոր մարդուն բնորոշ գիտակցություն ձևավորմանը:

**Հետազոտական աշխատանքի ընթացք:** Հետազոտական աշխատանքի ընթացքում կատարվել է համապատասխան գրականության ուսումնասիրություն և մշակում, որն էլ ամփոփելով և օգտագործելով մանկավարժական աշխատանքում կիրառվող մեթոդներ, կատարվել է պարապմունք սաների հետ հայրենաճանաչողության նպատակով:

**Հետազոտական աշխատանքի կառուցվածքը:** Հետազոտական աշխատանքս բաղկացած է ներածություն բաժնից, 2 գլուխմաներից, պարապմունքի պլանից և եզրակացություն բաժնից:

*«Կա մի ուրիշ մարմին, որ ավելի ու ավելի պաշտելի է, քան մեր սեփականը: Այդ մարմինը հայրենիքն է:»*

Մուրացան

# ԳԼՈՒԽ 1: ՍԱՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱԶՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

## 1.1 Ինչ է հայրենիքը և հայրենասիրությունը

*«Ինչպես առանց հողի, այնպես էլ առանց հայրենիքի ապրել չի կարելի:»*

Վիկտոր Հյուգո

Հայրենիքն այն տարածաշրջանն է, որտեղ մարդն ապրում է, ստեղծում է իր կենցաղը, կերտում պատմությունը, սա այն ամենապարզ պատասխանն է, որ յուրաքանչյուր ոք կտա այն հարցին, թե ի՞նչ է հայրենիքը: Շատերի համար հայրենիքը մի փոքրիկ հող է միայն, սակայն իրականում հայրենիքը սրբություն է, այն տարածքն է, որտեղ դարեր շարունակ ապրել է մի ազգ իր պատմությունը կերտելով, այն բնությունն է որտեղ մարդը իր ծննդյան օրից ապրում է: Հայրենիքը շենացնելու համար դեռևս նախադարոցական երեխան պետք է գաղափար ունենա հայրենասիրության մասին, քանզի միայն սաների ճիշտ կրթության և դաստիարակության շնորհիվ է, որ կարող ենք ստանալ սերունդ, որը կարող է հասկանալ հայրենիքի դերը և ամուր պահել հայրենի հողը:

Իսկ ի՞նչ է հայրենասիրությունը. Հայրենասիրությունը ենթադրում է մարդու դրական հատկանիշերի համալիր ձևավորում և զարգացում: Նրա հիմքում ընկած են հոգևոր-բարոյական և սոցիալ-մշակութային բաղադրատարրերը: Հայրենասիրության գաղափարն առանձնահատուկ տեղ է գրավում ոչ միայն հասարակության հոգևոր կյանքում, մշակույթում, այլ նաև նրա գործունեության բոլոր կարևորագույն ոլորտներում՝ քաղաքականության, տնտեսության, գաղափարախոսության, բնապահպանության մեջ:

Հայրենասիրության ժամանակակից ընկալումը բնութագրվում է ոչ միօրինակությամբ: Շատ բանում այն բացատրվում է տվյալ երևույթի բարդ բնույթով, նրա բովանդակության բազմակողմանիությամբ և արտահայտման ձևերի բազմազանությամբ:

Հայրենասիրությունը՝ բնույթով որպես խորապես սոցիալական երևույթ, հասարակության գոյության և զարգացման հզոր աղբյուր է, հանդես է գալիս որպես

մարդու կենսունակության, իսկ երբեմն էլ նրա կենսակայունության բնութագրից: Իսկական հայրենասիրությունը նրա հոգևոր բնույթի մեջ է: Հայրենասիրությունը կարևորագույն գործոն է սոցիալական խմբում անձի առավել լիարժեք դրսևորման համար: Այն ենթադրում է հայրենիքին անշահախնդիր, անմնացորդ ծառայություն:

Ելնելով այս ամենից՝ կարելի է ընդհանրացնել հայրենասիրության առավել էական կողմերը և սահմանել այն:

**Հայրենասիրությունը անձի առավել նշանակալից բարոյական արժեքներից է, անհատի կարևորագույն հոգևոր ձեռքբերումը, որը բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և արտահայտվում է ինքնադրսևորման ակտիվ գործունեությամբ՝ ի բարօրություն հայրենիքի:**

*«Հայրենիք մի սպասեք օտարից և ճակատագրից, եթե դա ձեր արյունով պաշտպանելու չափ հայրենասեր չեք»*

Գարեգին Նժդեհ

## 1.2 Ինչո՞ւ լինել հայրենաճանաչ

*«Ինչքանով երեխան փոքր է, այնքանով անմիջական պետք է լինի նրա հայրենասիրական դաստիարակությունը, այսինքն՝ նրան պետք է ոչ թե սովորեցնել, այլ ընտելացնել լավ զգացմունքների, հակումների, սովորությունների»:*  
Վիսարիոն Բելինսկի

Հայրենաճանաչողության դաստիարակությունը դաստիարակների և սաների միջև մի գործընթաց է, որն ուղղված է հայրենասիրական զգացմունքների զարգացմանը:

Հայրենաճանաչողության դաստիարակությունը նպատակ ունի երեխաների մեջ զարգացնել հայրենասիրական զգացմունքներ, սովորություններ և ազգային մշակույթ: Սրա նպատակն է կրթել համոզված հայրենասեր, ով սիրում է իր հայրենիքը, հավատարիմ է հայրենիքին, պատրաստ է ծառայել և պաշտպանել հայրենիքը: Երեխաների հայրենաճանաչողության դաստիարակությունը նախադպրոցական ուսումնական հաստատության հիմնական խնդիրներից է:

Երեխայի կյանքում նախադպրոցական տարիքը այն շրջանն է, երբ դրվում են բարոյական զգացմունքների, որակների, ազգային պատկանելիության գիտակցության ձևավորման և գնահատման նախնական հիմքերը: Երեխան սկսում է գնահատել ինչպես ուրիշի, այնպես էլ իր վատ ու լավ արարքները: Այդ գնահատումների հիմքի վրա երեխայի մոտ ծագում են ապրումներ, որոնք հետագայում վերածվում են դրական կամ բացասական սովորությունների: Հոգեբանների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այս տարիքի երեխաների մեջ դաստիարակված հատկություններն ու բնավորության գծերը հետագայում վճռական ազդեցություն են ունենում նրա անձնավորության ձևավորման գործում: Այդ իսկ պատճառով դեռևս վաղ տարիքից անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել սաների հայրենաճանաչ լինելուն:

Նախադպրոցական տարիքում երեխայի վարքը զգալի չափով որոշվում է զգացմունքներով: Այդ իսկ պատճառով արդեն այդ տարիքից երեխաների մեջ դաստիարակում են տարբեր զգացմունքներ՝ սեր ծնողների նկատմամբ, սեր մեծերի, հայրենիքի նկատմամբ, սեր և հարգանք հարևան ժողովուրդների նկատմամբ, նաև դրվում են բարեկամության և ընկերության նախնական զգացմունքի հիմքերը: Ուստի այս տարիքում էական է զբաղվել երեխայի հայրենաճանաչողության և վերոնշյալ զգացմունքների ճիշտ զարգացմամբ:

Պետք է գիտակցել. Բոլոր ժամանակների և մանավանդ այսօրվա մանկավարժի առջև դրված է կյանքի կողմից պարտադրված կարևորագույն խնդիր. այն է՝ դաստիարակել հայրենասեր և հայրենաճանաչ սերունդ:

## ԳԼՈՒԽ 2: ՍԱՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԾԱՆԱԶՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

### 2.1 Նյութի ուսումնասիրություն և պարապմունքի պլանավորում

Հետազոտելով սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը, կատարել եմ տարբեր աղբյուրներից վերցված տեսական նյութերի ուսումնասիրություն ու մշակում: Պլանավորել եմ աշխատանքս համալիր ծրագրով ու մշակել եմ պարապմունքի պլան հաշվի առնելով նախադպրոցական հաստատությունում համապատասխան խմբին բնորոշ տարիքային չափորոշիչներն ու առանձնահատկությունները: Այնուհետև անց եմ կացրել պարապմունք Գորիսի թիվ 5 նախադպրոցական հաստատության ավագ խմբում: Պարապմունքին ներկա են գտնվել նախակրթարանի տնօրենն ու այլ խմբի դաստիարակ, ովքեր ուշադրությամբ ունկնդրել ու արձանագրել են պարապմունքը, իսկ պարապմունքի վերջում տնօրենն ամփոփել է, գնահատելով անց կացված պարապմունքի ընթացքը և արդյունավետությունն, ապա կատարել համապատասխան դիտարկումներ:

### 2.2 Միջավայրի և նյութերի ընտրություն

Պարապմունքը անց եմ կացրել խմբասենյակում և պարապմունքի ընթացքում ներկայացվող նյութը ավելի դյուրընկալելի և հետաքրքիր դարձնելու նպատակով օգտագործել եմ թեմային բնորոշ նյութեր և պարագաներ:

Նախ օգտագործել եմ Հայաստանի Հանրապետության խորհրդանշաններից ՀՀ եռագույն դրոշը և պետական զինանշանի պատկերը, օգտագործել եմ ՀՀ քարտեզի պատկերը, ինչպես նաև նկարներ, որոնք երեխաների մոտ կարող են ասոցացվել հայրենի բնության, այստեղ եղած տեսարժան և գեղեցիկ վայրերի հետ:

### 2.3 Համակարգի ընտրություն

Բազմիցս կիրառելով և տեսնելով համակարգի արդյունավետությունը, այս հետազոտության ժամանակ ևս կիրառել եմ ԽԻԿ համակարգը, որն իրենից ներկայացնում է երեք փուլից կազմված ուսուցման կազմակերպման ռազմավարություն,



որը նպաստում է երեխայի քննադատական մտածողության, ինքնուրույն եզրահանգումներ կատարելու և ստեղծագործական մտածողության զարգացման վրա:

Այս համակարգի շնորհիվ սկզբնական փուլում տեղի է ունենում խթանում, որի նպատակն է քննարկման միջոցով վեր հանել երեխաների գիտելիքները ներկայացվող նյութի մասին, ակտիվացնել երեխաներին՝ ներգրավելով նրանց քննարկվելիք նյութի մեջ, ինչպես նաև ձևավորել նոր գիտելիքներ ձեռք բերելու ձգտում և շահագրգռվածություն: Որին հաջորդում է եռափուլ աստիճանի երկրորդ աստիճանը՝ «իմաստի ընկալում» փուլը: Այս փուլում հաղորդվում է նոր նյութը: Նշված փուլի նպատակն է երեխայի մոտ հետաքրքրության աճի պահպանումը, տեղեկատվության ընկալման ապահովումը և հին ու նոր տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը:

Կատարված քայլերի վերջին, եզրափակող փուլը «կշռադատել» փուլն է: Այս փուլում նվազագույնի է հասցվում սովորեցնողի դերը, քանզի այն կրում է ուղղորդող, հուշող, կարգավորող բնույթ: Վերջինս օգնում է, որ երեխան ինքը հանրագումարի բերի իր գիտելիքները, իսկ նորը դարձնի իր սեփականությունը: Կշռադատման փուլը հետապնդում է հետևյալ նպատակները.

- Երեխայի կողմից ստացված տեղեկատվության արտահայտում սեփական բառերով ու ձևակերպումներով
- Երեխաների հետ ծավալում նոր նյութի վերաբերյալ քննարկում՝ հնարավոր դարձնելով նույն գաղափարը ներկայացնել այլ ձևակերպումներով ու մոտեցումներով
- Նոր գիտելիքների միաձուլում ունեցածին և դրանց աստիճանական ինտեգրում

# ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ

**Թեման՝** «Իմ հայրենիքը»

**Տեսակը՝** զրույց

**Նպատակը՝** Երեխաների հետ կատարել հայրենաճանաչողություն, սովորելով սեփական հայրենիքի մասին: Տեղեկանալ հայրենիքի խորհրդանիշներին:

Կարողանալ զրուցել հայրենիքի մասին՝ զարգացնելով կապակցված խոսքը, հաղորդակցումը և մտքերի փոխանակումը:

**Անհրաժեշտ պարագաներ՝**

- ՀՀ քարտեզ,
- Դրոշ,
- Այլ երկրների դրոշներ և զինանշաններ,
- Զինանշան,
- ՀՀ օրհներգի ձայնագրություն:

**Ընթացքը՝**

**-Խթանման փուլ**

Հանելուկ՝ ունկնդրման և գուշակելու համար:

«Մի տուն ունենք աշխարհում,  
Հարազատ է ու սիրուն  
Նույն երկնքի տակ կապույտ  
Մեր ողջ ազգն է բնակվում:»

Հանելուկի գուշակում և զրույց այսօրվա թեմայի բովանդակության շուրջ:

Դ. – Ի՞նչ եք կարծում երեխաներ, ինչի մասին էր այս հանելուկը:

ԵԽ. – Մեր հայրենիքի

Դ. – Երեխաներ, երբ դուք եկաք մանկապարտեզ, ճանապարհին ի՞նչ տեսաք:

ԵՒ. – Սարեր, դպրոց, ծառեր, տուն...

Դ. – Այն ամենը ինչ դուք տեսաք, գտնվում է մեր հայրենի հողի վրա, մեր հողի վրա եղած ամեն բան միասին մեր ողջ հայրենիքն է: Եկեք միասին զրուցենք և ծանոթանանք մեր հայրենիքին:

### ***-Իմաստի ընկալում***

Հարց ու պատասխանի միջոցով ստուգել երեխաների գիտելիքները և անհրաժեշտության դեպքում կատարել լրացումներ:

Դ. – Ի՞նչ եք հասկանում հայրենիք ասելով:

Երեխաների կողմից հնչում են տարբեր պատասխաններ:

Դ. – Ինչպե՞ս են անվանում մեր հանրապետությունը:

ԵՒ. – Մեր հանրապետությունը անվանում են Հայաստանի Հանրապետություն:

Դ. – Հայաստանի Հանրապետությունը երբ է ձեռք բերել անկախություն:

ԵՒ. – 1991թ.–ի սեպտեմբերի 21–ին:

Դ. – Իսկ ղվ կասի, թե որն է ՀՀ–ի մայրաքաղաքը:

ԵՒ. – Երևանը:

Դ. – Իսկ ղվ է ցանկանում ասել, մենք որ մարզում ենք ապրում:

ԵՒ. – Մենք ապրում ենք Սյունիքի մարզում:

Դ. – Քանի՞ մարզ ունի Հայաստանի Հանրապետությունը:

ԵՒ. – Ունի 10 մարզ:

Դ. – Եկեք միասին քարտեզի վրա ցույց տանք և բարձրաձայն թվարկենք այդ 10 մարզերը:



Գծապատկեր 1. ՀՀ քարտեզը

Ցուցափայտող ցույց տալ և երեխաների հետ թվարկել մարզերը:

Արագածոտնի մարզ, Արարատի մարզ, Արմավիրի մարզ, Գեղարքունիքի մարզ, Լոռու մարզ, Կոտայքի մարզ, Շիրակի մարզ, Վայոց Ձորի մարզ, Տավուշի մարզ, Սյունիքի մարզ:

### Թարմացնող վարժություն.

Եկե՛ք շարժվենք մենք, հավասար՝

Ձինվորներ ենք հավասար,

Թող թշնամին վախենա,

Քա՛ջ ենք, ուժե՛ղ, անխնա՛:

Մենք քայլում ենք միշտ խորիստ,

Մե՛կ-երկո՛ւ, մե՛կ-երկո՛ւ:

Վեր խոյանում արծվի պես,

Դե՛, հիմա դուք տեսե՛ք մեզ:

Ձրույց ՀՀ խորհրդանիշների մասին.

Դ. – Երեխաներ, մեր հայրենիքի խորհրդանիշներն են Հայաստանի պետական դրոշը, զինանշանը և օրհներգը:

Ի՞նչ է պատկերված ՀՀ զինանշանի վրա:

Եխ. – Կենդանակերպի արքա առյուծը և թռչունների արքա արծիվը:

Դ. – Էլ ինչեր են պատկերված:

ԵՒ. – Պատկերված են 4 հայկական հզոր թագավորությունները՝ Արտաշեսյաններ, Բագրատունիներ, Արշակունիներ և Ռուբինյաններ: Մեջտեղում Արարատ լեռն է, վրան ջրհեղեղից փրկված Նոյան տապանը: Ներքևում՝ ցորենի հասկերն են շղթայով միաձուլված:

Դ. – Ո՞րոնք են մեր եռագույն դրոշի գույները:

ԵՒ. – Կարմիր, կապույտ, ծիրանագույն:

Դ. – Ինչ են խորհրդանշում այդ գույները:

Երեխաները պատասխանում են, հարկ եղած դեպքում ստանալով լրացումներ:

### **Խաղ՝ «Ճանաչիր, որն է քոնը»**

Գրատախտակին փակցրեցի մի քանի երկրների դրոշները ն, Ֆրանսիա, Հայաստան) Երեխաները պետք է գտնեն Հայաստանի խորհրդանիշները և ներկայացնեն:

Դ. – Մեր հանրապետությունն ունի իր պետական երգ-հիմնը՝ օրհներգը: Դա հատուկ հանդիսավոր երգ է, երբ այն հնչում է պետք է բոլորը ոտքի կանգնեն:

Հնչում է օրհներգը: Երեխաները ոտքի են կանգնում:

Դ. – Երեխաներ ի՞նչ եք զգում երգը լսելիս:

Երեխաները փորձում են սեփական մտքերը ձևակերպել և նկարագրել իրենց զգացմունքները:

Դ. – Իսկ հիմա, եկեք վերհիշենք Սարմենի «Հայրենիք» բանաստեղծությունը:

#### **Հայրենիք**

Մեր մեծ հայրենիք,

Ի՞նչ կա աշխարհում

Քեզնից անառիկ

Ու քեզնից սիրուն:

Սարե՛րդ՝ բարձրիկ,

Դաշտե՛րդ՝ անձայր,

Ջրե՛րդ՝ քաղցրիկ,

Արև՛դ՝ պայծառ:

Դու տվել ես մեզ  
Ծաղիկ ու ծիծաղ,  
Երգ, մանկապարտեզ,  
Թե՛ ուսում, թե՛ խաղ:

Դու տվել ես մեզ  
Թռիչքի թևեր,  
Որ բարձրանանք մենք  
Աստղերից էլ վեր:

### **– Կշռադատման փուլ**

Դ. – Երեխաներ, եկեք միասին վերհիշենք ասույթներ հայրենիքի մասին:

- «Նա ով չի սիրում իր հայրենիքը, ոչինչ չի սիրում:»
- «Ավելի լավ է չոր հաց սեփական տանը, քան բազում կերակուրներ օտարի տանը:»
- «Ինչպես որ քաղցր են ծնողները, այնպես էլ քաղցր է մեր ծննդավայրը:»

Դ. – Սիրելի փոքրիկներ՝ դու, ի՞նչ նոր գիտելիք ձեռք բերեցիք այսօր:

Երեխաների կողմից հնչում են պատասխաններ:

Դ. – Երեխաներ, ինչպիսին պետք է լինի հայրը:

Եխ. – Ազգասեր, հայրենասեր, համարձակ, քաջ, վստահ...

Դ. – Ապրեք, իմ փոքրիկ հայրենասերներ:

### **Հետազոտության վերջնարդյունք.**

Կատարված աշխատանքի արդյունքում երեխաները կունենան պատկերացումներ հայրենի երկրի, մայրաքաղաքի, իր բնակավայրի մասին, կկարողանան ճանաչել իրենց երկրի պետական խորհրդանիշները՝ պետական դրոշմ, զինանշանը, օրհներգը:

Պատասխանելով հարցերին կզարգացնեն խոսքի և հաղորդակցման հմտությունները:

Կլինեն հայրենաճանաչ և հայրենասեր սաներ:

## **Տնօրենի դիտարկում.**

Սաները համակ ուշադրությամբ և մեծ հետաքրքրասիրությամբ լսում էին դաստիարակին պարապմունքի ողջ ընթացքում: Դաստիարակը թեման մատուցեց հետաքրքիր՝ հասնելով իր առջև դրված նպատակին, այն է՝ հայրենաճանաչողության դասվարել սաների հետ՝ դաստիարակելով մեծ արժեքներ և տալով կարևորագույն գիտելիքներ: Երեխաները սովորեցին հայրենի երկրի խորհրդանիշների մասին, կարողացան պատասխանել դաստիարակի կողմից տրվող հարցերին, տարբերակել իրենց երկրի խորհրդանիշները այլ երկրների խորհրդանիշներից, լսեցին ասույթներ հայրենիքի մասին:

Ձեռք բերելով նոր գիտելիքներ, երեխաները դարձան հայրենաճանաչ, որը հիմք է հայրանասեր սերունդ ունենալու համար:

Դաստիարակի կողմից ընտրված էր բավականին կարևոր թեմա, քանի որ հայրենիքի ճանաչման և արժևորման առաջին սերմերը ցանվում են նախադպրոցական հասակում և այժմ՝ պարապմունքից հետո, վստահ եմ, որ այդ սերմերը անպայման բերք կտան:

## **Կապը չափորոշիչ ոլորտի հետ.**

- Խոսքի և հաղորդակցության ոլորտ
- Իմացական ոլորտ

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով սաների հայրենաճանաչողության թեման, Եզրակացրի, որ սաների հայրենաճանաչողության հարցը այսօրվա կարևորագույն նպատակներից է, որի հիմքերը պետք է կառուցել դեռևս նախադպրոցական տարիքում: Յուրաքանչյուր սան պետք է իմանա, թե որն է իր հայրենիքը, դրա դերն ու նշանակությունը մեր կյանքում: Յուրաքանչյուր երեխա պետք է լինի հայրենաճանաչ և տեղեկացված լինի հայրենի հողի պատմությանը, նրա խորհրդանիշներին:

Երեխաները սիրով են լսում իրանց հայրենքի մասին դասերը, և ակտիվ մասնակցություն են ունենում թեմատիկ պարապմունքին, ուստի պետք է ավելի հաճախ ունենալ պարապմունքներ մեր կարևորագույնի՝ հայրենիքի մասին և այն մատուցել հասկանալի և հետաքրքիր ձևով, ընտրելով այն գիտելիքները, որոնք հասանելի կլինեն նախադպրոցական տարիքի երեխայի համար:

Եզրակացրի, որ մեր՝ ավագ սերնդիս իրական ու նպատակային աշխատանքի շնորհիվ իսկապես կարելի է ցանկալի արդյունքի հասնել և դաստիարակել հայրենիքին արժանի զավակներ՝ հայրենաճանաչ, հայրենասեր, հզոր:



## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Կամալովա Ն.Ռ., Բլագուշկո Լ.Ն., Ստրելնիկովա Լ.Ն., Պետրովա Ա.Վ., Բարչինսկայա Վ.Յու., Մուրչենկո Ն.Ա. «Մանկավարժական խորհուրդներ նախադպրոցական ուսումնական հաստատություններում», 2016 թ.
- Չիբուխչյան Ս.Ա., Սարգսյան Լ. ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան 2011
- Մարտիրոսյան Գ. Էկոլոգիական «դաստիարակությունը նախադպրոցական տարիքում մեթոդական ուղեցույց», Երևան 2007
- Էդ. Վինոգրադովա Ա. Մ., -Մ., «Բարոյական զգացմունքների կրթություն ավագ նախադպրոցականների մոտ», 1980թ.
- Дошкольникам о защитниках отечества: методическое пособие по патриотическому воспитанию в ДОУ, под ред. Л. А. Кондрыкинской. М.. Сфера, 2006.
- Լուկինա Լ. Ի., «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական անձնակազմի հետ աշխատանքի կազմակերպչական ասպեկտները», 2010թ.
- «Բելգորոդի շրջանի կրթության վարչության տեղեկատվական մեթոդական նամակ». ուսումնական հաստատություններ Բելգորոդի մարզը 2014-2015 թթ. ուսումնական տարին.